ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 16-Ն

« 25 » մայիսի 2017 թվական գյուղ Ձորակապ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.066 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՄԵՈ ԱՐԱՐԱՏԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ, 2-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով քաղաքացի Ռոմեո Արարատի Ղազարյանին դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ձորակապի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ձորակապի համայնքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքցի Ռոմեո Արարատի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի N 498464, տրված՝ 05.08.2002թ) պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ձորակապի համայնքի սեփականությանը համարվող 08-073-042-040 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.066 հեկտար հողամասը (հասցեն՝ Ձորակապ համայնք, 1-րդ փողոց, տուն 14) ուղղակի վաճառքով, տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, 146520 (մեկ հարյուր քառասունվեց հազար հինգ հարյուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել քաղաքացի Ռոմեո Արարատի Ղազարյանին:

2. Ձորակապ համայնքի ղեկավար Արամ Մարտիրոսյանին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացի Ռոմեո Արարատի Ղազարյանիհետ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի առուվաճառքի պայմանագիր և ապահովել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ՄԵԼԻՔՍԵԹ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ՝ կողմ ----------

ԱՐՍԵՆ ԻԳԻԹՅԱՆ՝ կողմ ----------

ԱԼԲԵՐՏ ՀԱԿՈԲՅԱՆ՝ կողմ ----------

ՌԱԶՄԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ՝ կողմ ----------

ԱՐԵՍՏԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ՝ կողմ ----------

ՁՈՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«25...» մայիսի 2017 թվական
գ. Ձորակապ